



**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

1 հունիսի 2012թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Մ. Թովուզյանի

Քննության առնելով քաղաքացիներ Խաչատուր Նազարյանի և Նելեն Շահբազյանի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Նամաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
քաղաքացիներ Խաչատուր Նազարյանը և Նելեն Շահբազյանը 2012թ. մայիսի 14-ին դիմել են
ՆՏ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Նասարակության և պետության կարիքների
համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ
նախադասությունը և 2-րդ մասը ճանաչել ՆՏ Սահմանադրության 3-րդ, 8-րդ և 31-րդ
հոդվածներին հակասող և անվավեր:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. «Նասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման
մասին» ՆՏ օրենքի վիճարկվող 11-րդ հոդվածը վերաբերում է հասարակության և
պետության կարիքների համար օտարվող սեփականության դիմաց փոխհատուցմանը:

Դիմողները նշում են, որ ՆՏ Սահմանադրության 31-րդ հոդվածը վերաբերում է սեփականափրոջ կամքին հակառակ՝ նրա սեփականությունը դափական կարգով հասարակության եւ պետության կարիքների համար վերցնելու գործընթացին, երբ «բաց եւ մրցակցային շուկայում» նույն սեփականության արժեքի ձեւավորման սովորաբար կիրառվող սկզբունքները ոչ միայն կիրառելի չեն, այլ հակասում են նշյալ դրույթի իրավակարգավորման բուն էությանը:

Ըստ դիմողների՝ ...«Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունն այս բացը փորձել է լրացնել նրանով, որ հասարակության եւ պետության կարիքների համար օտարվող սեփականության դիմաց համարժեք փոխհատուցում է համարել օտարվող գույքի շուկայական արժեքը, որին ենթակա է գումարման a priori որոշված 15 փոկոսի հավելումը: Միեւնույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասն օտարվող սեփականության արժեքի հիմքում դրել է «բաց եւ մրցակցային շուկայի համար» կիրառվող չափանիշները, որոնք կիրառելի չեն ՆՏ Սահմանադրության 31-րդ հոդվածում հիշատակվող սեփականության հարկադիր օտարման գործընթացի նկատմամբ:

Դիմողների կարծիքով՝ նման պայմաններում «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ սահմանված 15 փոկոսի հավելման հասկացությունը խիստ կամայական է, քանի որ չունի որեւէ ողջամիտ բացատրություն:

2. Դիմումի ընդհանուր փրամաբանությունը վկայում է, որ կոնկրետ փվյալ դեպքում դիմողների համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրանց նկատմամբ կայացված համապատասխան դափական ակտի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողներն ընդամենը բարձրացնում են դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ: Դիմողների փաստարկները հիմնականում ուղղված են վիճարկվող դրույթով սահմանված «15 փոկոսի հավելում» հասկացությանը, եւ դիմումի ընդհանուր բովանդակությունից ակնհայտ է, որ դիմողներն իրենց նկատմամբ առաջացած անբարենպաստ հետեւանքները կապում են փոխհատուցման համար փրամադրվող գումարի չափի որոշման՝ դափարանի կողմից կիրառված եւ իրենց կարծիքով խնդրո առարկա իրավահարաբերության նկատմամբ գնահատման անհամարեղելի մեթոդի կիրառման հետ: Փաստորեն, դիմողները՝ ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում են այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց:

Նամաձայն ՆՏ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ «...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեռականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 հոդվածի 1-ին մասի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Այսինքն՝ առկա է անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

3. Ինչ վերաբերում է «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասին, ապա դիմողների նկատմամբ կայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ նշյալ դրույթի վերաբերյալ որեւէ անդրադարձ չկա ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացված դատական ակտերում:

Այսպես, դիմողների՝ ՆՏ վերաքննիչ դատարան ներկայացրած փաստարկները վերաբերել են օտարվող հողամասերի դիմաց արվող փոխհատուցման չափին: Իսկ համարժեք փոխհատուցումը կատարվում է «Նասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված չափով, ըստ որի՝ համարժեք փոխհատուցում է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից 15 փոկոս ավելի գումարը: Մինչդեռ, անհատական դիմումին ներկայացվող պահանջներից մեկն էլ դիմողի նկատմամբ վիճարկվող դրույթի կիրառումն է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից: Այս պայմանը, ի թիվս այլնի, նախատեսված է «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով: ՆՏ սահմանադրական դատարանն իր ՍԴԱՌ-21 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով՝ ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Քաղաքացիներ Խաչատուր Նազարյանի եւ Նելեն Շահբազյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



1 հունիսի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/2-11